

**ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆ.**  
**ՀԱՒԱՔԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՁՆԱԿԱՆ**  
**ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ (Քեսապի Պարագայ)**

*Մօրս յիշատակին*  
Շողիկ Աշըգեան  
shogherashekian@yahoo.com

**ՆԵՐԱԾԱԿԱՆ**

Պատմութեան ընթացքին Քեսապի բնակչութիւնը տեղահանուած է երեք անգամ. 1909ին, 1915ին եւ 2014ին<sup>1</sup>: Երեք անգամ ալ, այսպէս կամ այնպէս, բնակչութիւնը վերադարձած է իր բնօրրանը:

Առաջին երկուքին մասին լսած եմ կենդանի ձեռքով՝ քեսապցի մեծմայրերէ եւ մեծհայրերէ: Աւելի ուշ նաեւ կարդացած եմ այդ դէպքերուն մասին: Իմ մանկութեան եւ պատանութեան անմիջական մարդկային միջավայրը լեցուն եղած է 1909 եւ 1915 տեսած ծերունազարդ մարդոցմով: Անոնք ուղղակիօրէն ապրած էին այդ աղէտները, ու անցնելով անոնց մէջէն հաւաքաբար կրողներն էին դառն յիշողութիւններու: Այդ հաւաքական յիշողութիւնը աննկատ ու անցաւ կերպով կը փոխանցուէր փոքրերու՝ անոնց պատումներուն միջոցով: Առանց վախ ու սարսափ զգալու, առանց բարդոյթի, նոյնիսկ մեծ հետաքրքրութեամբ մտիկ ըրած ենք 1909ի եւ 1915ի անոնց անձնական կեանքի դրուագները: Վերջիվերջոյ, չէ՞ որ այդ ամէնը պատմութիւն էին, անցեա՛լ: Իրենց ներկայութիւնը կենդանի ապացոյցն էր Քեսապի գոյատեւման, իրենց վերապրումին ու նաեւ յաղթանակին: Իրենք կա՛յին. կային հաւաքաբար եւ կ'ապրէին իրենց հարազատ աշխարհագրական միջավայրին մէջ, իրենց Հողին վրայ: Իրենց համար միակ էականը այդ **կեցութիւնն** էր. հաւաքական կեցութիւնը ա՛յն միջավայրին մէջ, որուն հետ կապուած էին հաւաքական յիշողութեամբ: Կեցութիւնը ինքը կեանքն է, եւ կեանքը ինքնին գերագոյն արժէք ըլլալով՝ յաղթանակ է մահուան դէմ: Չարը պարտուած եւ բարին յաղթանակած էր իրենց վերապրումով, բայց նաեւ իրենց տունդարձով: Ա՛յս էր իրենց պատումներուն հիմնական հասարակաց գիծը:

Անոնց պատումի դրուագները ցայսօր վառ են յիշողութեանս մէջ՝ իբրեւ ծայն ու պատկեր, դիմախաղ ու բովանդակութիւն:

Առաջին երկու տեղահանութիւնները բանաւոր պատումի, պատմութեան եւ մշակոյթի միջոցով փոխանցուած են ինծի իբրեւ հաւաքական յիշողութիւն: Երրորդը՝ 2014ինը, անձնական փորձառութիւն մըն է, որ կարդալու եւ սերտելու փոխարէն ապրեցայ հարազատներուս եւ համայն քեսապահայութեան հետ: Այնպիսի տեղահանութիւն մը, որուն նմանատիպ նախաճանաչողութիւնը տեսականօրէն ունէի քանի մը հանգամանքներով՝ իբրեւ քեսապցի, իբրեւ Հայկական Յեղասպանութեան

հաւաքական յիշողութիւնը կրող հայ ու նաեւ իբրեւ պատմաբան: Լաւապէս կը գիտակցէի, թէ հաւաքականութիւն մը ինչ հարցեր կը դիմագրաւէ տեղահանութենէ մը ետք: Կը բաւէ այդ նիւթին մասին կարդալ 1915ի Ցեղասպանութեան հետեւող առաջին երկու տասնամեակներու Սփիւռքի գաղութներուն կազմաւորման պատմութիւնը: Երբ պատմութիւն կ'ուսումնասիրենք՝ գիտելիքներուն հետ կ'ամբարենք միջնորդած փորձառութիւն: Որքան խորունկ ըլլայ անցեալի ճանաչողութիւնը, այնքան աւելի հարուստ կ'ըլլայ մեր փորձառութիւնը: Անխոռվ էի,- եւ ատիկա չէր վրիպեր շուրջիններուս ուշադրութենէն,- գուցէ այդ պատճառով: Բայց նաեւ ա՛յն պատճառով, որ Քեսապի գրեթէ ամբողջ բնակչութիւնը (քիչ բացառութեամբ) - մանուկ, մեծահասակ, ծեր - (բոլորը՝ հարազատներ ու ծանօթներ) որջ էր՝ ստոյգ վտանգէն ազատած: (Պէտք է ըսեմ որ, նոյն զգացողութիւնը, առաւել կամ նուազ ուժգնութեամբ, ունէր իւրաքանչիւր քեսապցի՝ առանց պատմաբան ըլլալու: Որովհետեւ ինք կա՛ր, գոյութիւն ունէր. եւ այդ էր էականը, բացարձակ էականը: Մնացեալ բոլոր պարագաները ենթակայ էին ա՛յդ իրողութեան եւ հետեւաբար՝ յաղթահարելի): «ՎերԱՊՐՈՂ» հաւաքականութիւն մըն էր քեսապցին: Վերապրիլ կը նշանակէ մահուան յաղթած ըլլալ: Միթէ ասիկա իսկական հերոսութիւն չէ՞ր: Զգացական եւ մտածողական մակարդակներու վրայ յաղթողի այս հոգեբանութիւնը ընդհանրական բնոյթ ունենալով՝ ենթակայական գետնի վրայ ներգործօն ուժականութեան անսպառ աղբիւր մը եղաւ թէ՛ ղեկավարին, թէ՛ պարզ անհատին համար, որմէ սնունդ կ'առնէր հաւաքական արժանապատուութիւնը:

Ցեղահանութեան երկրորդ օրն էր Լաթաքիա, հարազատներով արդէն տեղաւորուած էինք նոր բնակարանի մէջ, կը պատրաստուէի Ս. Աստուածածին եկեղեցի մեկնիլ՝ գործիս գլուխը ըլլալու, երբ մայրս դիպուկ նկատողութիւն մը ըրաւ. «Պատմութիւն ուսանիլդ քեզ (եւ մեզ) ամէնէն աւելի ա՛յս պարագային պէտք պիտի գայ»: Իրաւացի՞ էր մայրս: Տարօրինակ չէ՞ր որ ե՛ւ հարազատներս, ե՛ւ մտերիմ գործակիցներս, եւ ընդհանրապէս քեսապցիներ նոյնանման նկատողութիւններ կ'ընէին ինծի: Ամէն պարագայի, մօրս խօսքը եղաւ սթափեցնող, յիշեցումները ինծի մտածել տուին եւ օգնեցին որ ամէնօրեայ գործնական աշխատանքներուս ու հեւրոտ սպառումիս մէջ պատմաբանի հայեացքս չկորսնցնեմ ու այդ ակնոցով դիտարկեմ տեղահանուած հաւաքականութիւնն ու անոր իրականութիւնը:

Այդ իրականութիւնը դառն ու դժուար էր. բայց քեսապցիին համար ո՛չ այնքան կենցաղային անբնական պայմաններն էին անտանելին, ո՛չ վաղուան անորոշութիւնը եւ ո՛չ ալ քաղաքական լարուած կացութիւնը, այլ այդ բոլորէն անդին ու ամէնէն առաջ՝ իր **արմատախիլ** եղած ըլլալը: Կորսուած էր բնօրրանը, որ ամէն բանէ առաջ ՀՈՂ էր, որուն կորուստին մըմռացող անլուր **Տաւն** ու մորմոքող **Կարօտը** կը սկսէր տեղահանութեան

առաջին օրէն: Անոր անպայման վերադառնալու համոզումով՝ իրեն կը մնար այդ դառն իրականութիւնը լեռնական մարդու բարձր արժանապատուութեամբ կրելու գիտակցութիւն եւ կարողականութիւն ցուցաբերել՝ կենցաղային առօրեայէն մինչեւ քարոզչական մարզ եւ քաղաքական մակարդակ: (Ամէն պարագայի, այս մարզը առանձին ուսումնասիրութեան նիւթ է):

Տեղահանուած քեսապցիներէն առաջ տեսած էի նոյն կացութեան մէջ յայտնուած արցախցիներ (Շահումեանէն ու Մարտակերտէն) Երեւան, երբ ուսանողուիի էի այնտեղ: Բաց երկինքին տակ անոնց հաւաքական ներկայութիւնը սրտանմլիկ տեսարան կը պարզէր: Անոնցմէ ոմանց սարսափահար դէմքերը տակալին դրոշմուած կը մնան յիշողութեանս մէջ. յատկապէս՝ կիներունը: Ինչու՞ այդքան խեղճ էին անոնք: Չէ՞ որ վերջիվերջոյ կը գտնուէին հայրենի հողի վրայ: Այն ատեն չէի հասկնար:

Հայոց նոր եւ նորագոյն պատմութեան մէջ գրեթէ մեր բոլոր հողային կորուստներուն պատճառը Թուրքիան է: Անոր պատճառով էր, որ Քեսապ հայաթափուած էր նաեւ այս անգամ: Այս պարագան զայրոյթ եւ ընդվզում կ'առաջացնէր: «Թուրքը իր թրքութիւնը նորէն ըրաս» կ'ըսէին քեսապցիները:

Տարածք եւ ժամանակ հասկացութիւնները անբաժանելի են իրարմէ: Արմատախիլ ըլլալ, չի նշանակեր միայն բնակավայրէ կտրուիլ, այլ մանաւանդ **ժամանակէն** խզուիլ: Երբ Հող-բնակավայր կը կորսնցնենք անոր հետ կը կորսնցնենք ժամանակ, պատմութիւն եւ մշակոյթ: Վերջին երկուքը «տեղափոխելի» են. տեղահանուած բնակչութիւն մը իր հետ կրնայ «տանիլ» իր պատմութիւնն ու մշակոյթը: Արմատախիլ կացութեան մէջ կը սկսի «նոր ժամանակ» հիւսուիլ, (ոչ առաջինին պէս, բայց անոր նման: Քանի որ նոր ժամանակը, նախկինին շարունակութիւնը չ'ըլլար): Միակ բանը որ չի՛ տեղափոխուիր, կը մնայ անշարժ ու հաստատուն՝ Հո՛ղն է (Բնօրրանը): Ահա թէ ինչու՛, անխուսափելի ձգողական ուժի նման, կը ծնի անոր վերադառնալու ձգտումը...

## ՄԵԹՈՏԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂԲԻԻՐՆԵՐ

Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ համախումբ ու կազմակերպուած առօրեան դրական եւ կարեւոր տուեալ մըն էր դիտարկում իրականցնելու համար:

Մարտ 21 Դէպքին յաջորդած երեք ամիսներուն քեսապահայուն տեղահանուած իրավիճակը մնաց ամէնօրեայ տեսադաշտիս մէջ, դիտարկմանս առարկայ: Ամէն օր, առաւօտեան կանուխ ժամերէն մինչեւ ուշ կէս գիշեր պարտականութեանս բերումով եղած եմ ժողովուրդին հետ՝ Եկեղեցւոյ շրջափակէն ներս, ուր ստեղծուած էր «Հոգեւոր Քեսապը»: Շատ յաճախ, նաեւ գիշերած եմ հոն: Եւ կեցութեան անփոփոխ պայմաններուն

մէջ ամբողջ երեք ամիս այնտեղ ե՛լ ականատեսը ե՛լ մասնակիցը եղած եմ բո՛լոր անցուդարձերուն:

Այս ուսումնասիրութիւնը սուրիահայ գաղութի մէկ հանրոյթին պատմութեան մէկ երեսը կը փորձէ պեղել՝ քանակականէ աւելի որակական փոքր պատմութեան տեսքով:

Քեսապի պարագան զգայացունց քաղաքական դէպք մըն էր Սուրիոյ տագնապի շրջագիծին մէջ, ինչ որ ապացուցուեցաւ Դէպքէն անմիջապէս ետք տեղական թէ միջազգային լրատուամիջոցներու ցուցաբերած փութաջանութեամբ: (Այս մարզը նոյնպէս առանձին ուսումնասիրութեան նիւթ է): Իսկ համահայկական դիտանկիւնէն՝ Աղէտ էր:

Լրատուամիջոցներու քարոզչական զիկզակումներուն իտես, այդ երեւոյթէն անկախ սակայն, մօտէն իրազեկ ու առնչակից ըլլալով գետնի վրայ ընթացող աշխատանքներուն, առաջին օրէն ինձի համար հարց դարձաւ, թէ Մարտ 21ը եւ անոր յաջորդող օրերը ինչպէ՛ս կը յանձնուին պատմութեան՝ ոչ այնքան իրենց արտաքին շրջագիծով, որքան՝ քեսապահայութեան հետ առչնուած կապով, որուն ուսումնասիրութիւնը կարելի չէ առանց արխիւային նիւթերու հասանելիութեան: Ի յառաջագունէ կ'ընդունիմ որ ներկայ հանգրուանին կարելի չէ ամբողջական խորքով ներկայացնել տեղահանութեան պատմութիւնն ու բանալ անոր բոլոր ծալքերը. առարկայական կերպով վերլուծելով երեւոյթները եւ արժանի ու ճշմարիտ գնահատականը տալ բոլոր անոնց - անհատներ թէ մարմիններ - որոնց վրայ ծանրացած էր ժողովուրդին տիրութիւն ընելու գործը: Տակաւին կանխահաս է հրապարակայնացնել ամէն նիւթ, եւ բարձրացնել ամէն հարց ու անոնց տալ սպառիչ պատասխաններ: Ընդհանրական բնորոշումով, «Երկաթը տաք տաք կը ծեծեն»ը չի վերաբերիր պատմութիւն գրելուն:

Անձնապէս շատ լաւ կը ճանչնամ քեսապցին, անոր հոգեբանութիւնն ու մտածելակերպը: Աւելի՛ն, մէկ առ մէկ կը ճանչնամ բոլորը, այնպէս որ, դիւրաւ կրնայի որոշել, թէ ինչ փոխուած է անոնց մէջ թէ՛ անհատաբար եւ թէ՛ հաւաքաբար: Երեք ամիս ապրելով անոնց հետ՝ խճանկարի նմանողութեամբ կազմած եմ ընդհանուր պատկերը, որ կը փորձեմ ներկայացնել այստեղ:

Այս յօդուածը պատրաստած եմ Դէպքէն մէկ տարի ետք, Մայիս 2015ին, Քեսապ, յատուկ՝ Հայկազեան Համալսարանի Հայկական Սփիւռքի Ուսումնասիրութեան Կեդրոնին կազմակերպած սուրիահայութեան թեմայով գիտաժողովին ներկայացնելու համար, երբ քեսապցին դժուար այլ աննկուն վերականգնման իր առաջին տարին բոլորած՝ յետահայեաց մօտեցումով կ'անդրադառնար պատահածին՝ զգացական ազդեցութիւնները մասամբ թօթափած: Այս պարագան ես կարեւոր կը համարեմ: Կ'ուզեմ աւելցնել նաեւ, որ վերջին տասը տարիներուն անընդմիջաբար ապրած եմ Քեսապ, որ ծննդավայրս է, եւ

ուր Սուրիոյ Ճգնաժամի տարիներուն անմասն չեմ մնացած ազգային կեանքին իմ համեստ մասնակցութիւնս բերելէ: Հետեաբար անոր հաւաքական կեանքին վերաբերող իրադարձութիւններուն քաջածանօթ եմ մօտէն: Ինչ կը վերաբերի տեղահանութեան Դէպքին, հոս կ'արձանագրեմ միայն ա՛յն, ինչ որ ինքզինքիս թոյլատու կը համարեմ: Նիւթը շարադրած եմ հիմնուելով ձեռքիս տակ եղած անտիպ նիւթերու տուեալներուն, դիտարկումներու եւ ականատես-մասնակիցի անձնական փորձառութեանս վրայ:

Փորձառութեանս եւ դիտարկումներուս խտացած հանրագումարը ներկայացուցած եմ մտախոհական-վերլուծական ենթախորքի վրայ:

Պատմութիւն գրելը պատասխանատու աշխատանք է: Աւելի պատասխանատուութիւն կ'ենթադրէ պզտիկ կամ մեծ իրադարձութիւն մը, ժամանակահատուած մը նորէ նոր պատմութեան յանձնելը:

Այս ուսումնասիրութիւնը պատրաստած ատեն շատ ատելի տագնապած եմ, քան ամբողջ ա՛յն երեք ամիսներուն, զորս անցուցի տեղահանուած հայրենակիցներու հետ՝ անոնց անհատական եւ հաւաքական մտահոգութիւններն ու տագնապները ի՛մս ընելով: Տագնապած եմ արդա՛րօրէն, բժախնդրութեան եւ պատասխանատուութեան ա՛յն պարտաւորեցնող գիտակցութեամբ, որ գրուած ամէն մէկ նախադասութիւն ըլլայ առարկայական, փաստերով հիմնաւորուած, ճշգրտօրէն համապատասխանէ իրականութեան, հաւատարիմ մնալով պատմաբանի ստորոգելիներուն՝ ճշմարիտն ու ճշգրիտը յանձնել պատմութեան, բայց նոյնքան եւ ատելի՝ որպէսզի հայութեան փոքրիկ, զուցէ եւ աննշան, այս կոտորակին արժանապատուութիւնը, որ այնքան բարձրօրէն պահեց տեղահանութեան եւ անոր յաջորդած երեք ամիսներուն, վիրաւորած չըլլամ դոյզն իսկ մէկ բառով:

Համոզուած եմ: Ժամանակի ընթացքին երբ նոր տուեալներ հրապարակուին, ատելի լոյս կը սփռեն այս ուսումնասիրութեան յատկապէս ա՛յն մասին վրայ, որ կը վերաբերի 2014 Մարտի Քեսապի տեղահանութեան:

#### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐԸ

Անպայմանօրէն Տեղահանութեան դէպքն ու անոր առնչակից քաղաքական իրադարձութիւնները շարադրելու նպատակը չի հետապնդեր այս ուսումնասիրութիւնը: Ինչպէս կը յուշէ անոր վերնագիրը, զիս հետաքրքրողը եղած է Քեսապի օրինակին ընդմէջէն փորձել քննարկման նիւթ դարձնել **Տեղահանութիւնը**՝ կարգ մը երեսներով, իբրեւ անոր ականատես դարձած, անոր ենթարկուած ու զայն դիտարկած անձ:

Այս ուսումնասիրութիւնը պատրաստած եմ իմ առջեւ դնելով հետեւեալ հարցադրումները՝ անոնց պատասխաններ գտնելու մղումով.

- Փոխներգործության առումով. 1915ի պատմական-հաւաքական յիշողութիւնը ի՞նչ աղերսներ կ'ունենայ եւ ինչպէ՞ս կը ներգործէ նման պարագաներուն: (Այս պարագային տեղահանութեան զուգահեռ երեւոյթն է քննարկման առարկան):
- Իբրեւ Արարք. Տեղահանութիւնը ի՞նչ ազդեցութիւն կ'ունենայ հաւաքականութեան մը վրայ, եւ ան ի՞նչ միջոցներով կը յաղթահարէ զայն:
- Ազգային ռազմավարութեան եւ պահանջատիրութեան դիտանկիւնէն. քեսապցիին համար Մարտ 21ին իսկ ակնյայտ էր Թուրքիոյ զինուորական գործօն մասնակցութիւնը, հետեւաբար նաեւ պատասխանատուութիւնը, Քեսապի տեղահանութեան մէջ: Քեսապահայութեան այս կենսափորձը հայութեան հաւաքական կեանքին մէջ նկատի առնուելու չափ տեղ կը գրաւէ, եւ եթէ կը գրաւէ՝ ի՞նչ հարցադրումներ կը ստեղծէ, կամ ի՞նչ դասեր կը պարունակէ, թէ՞ իբրեւ տեղայնական եւ ոչ-համընդհանրական պարագայ պիտի մնայ Քեսապի տարեգրութեան եւ միայն քեսապցիին յիշողութեան մէջ:

#### ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ

Փորձագիտական առումով այս ուսումնասիրութեան մասին, յատկապէս անոր մէջ տեղ գտած տուեալներու պարագային -իրե՛նց տեսակէտերը արտայայտած են եւ ճշտումներ կատարած քեսապցի ազգայիններ, որոնք Քեսապի եւ Լաթաքիոյ մէջ քեսապահայութեան վերաբերող տարբեր բնոյթի աշխատանքներուն մասնակցութիւն ունեցած են:

#### ՔԵՍԱՊԻ ԵՐՐՈՐԴ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

##### **1909ի, 1915ի, եւ 2014ի Տեղահանութիւններուն Նմանութիւնները**

Բացի պատճառ-հետեւանք-վերջնական արդիւնք համանմանութենէն, երեք տեղահանութիւններն այլ հանգիտութիւններ չունին: Արդարեւ, երեք տեղահանութիւններուն ալ պատասխանատուն Թուրքիոյ պետութիւնն է (օսմանեան եւ հանրապետական): Առաջին երկուքի պարագային՝ ուղղակիօրէն. (քեսապցին տեղահանուած է իբրեւ Օսմանեան Կայսրութեան քաղաքացի): Երրորդ պարագային՝ միջնորդուած ձեւով. Թուրքիա, օգտագործելով Սուրիոյ տագնապն ու պատերազմական վիճակը ահաբեկիչներուն առջեւ բացաւ ամբողջ սահմանագիծը, զինուորական գործողութիւնները ղեկավարեց ու հովանաւորեց անոնց ներխուժումը Քեսապ՝ խախտելով իր եւ Սուրիոյ միջեւ կնքուած սահմաններու ապահովութեան համաձայնագիրը<sup>2</sup>: Երեք պարագաներուն ալ Քեսապ ամբողջութեամբ իր բնիկ տարրէն պարպուած է: Իսկ վերջնական արդիւնքի առումով, երեք պարագաներուն ալ քեսապցին

վերադարձած է իր բնակավայրը՝ 1915ին կորսնցնելով իր ընդհանուր թիւին 2/3ը<sup>33</sup>:

Քեսապցիին հաւաքական յիշողութիւնը այս երեք հանգիտութիւններուն վրայ սեւեռուած մնաց:

#### ՔԵՍԱՊԸ 2011-14 ՄԱՐՏ

2011ին Սուրիոյ տագնապին սկսելէն շատ չանցած, Քեսապի՝ ազգային-եկեղեցական մարմինները, սկսան շրջանին մէջ ստեղծուած տնտեսական, ծառայողական եւ ապահովական հարցերը դիմակայելու աշխատանքներ տանիլ: Ամէնէն հրատապ հարցը ժողովուրդին անվտանգութիւնն էր, որ կը բխէր Քեսապի՝ Թուրքիոյ սահմանային շրջան մը ըլլալէն: Քեսապի սպառնացող հաւանական վտանգը կրնար գալ թրքական սահմանէն՝ հաշուի առնելով Թուրքիոյ քաղաքականութեան կտրուկ փոփոխութիւնը Սուրիոյ իշխանութեան (ըստ էութեան՝ պետականութեան) նկատմամբ, որ պետական ջերմ բարեկամութեան կարճ շրջանէ մը ետք կը ստանար դրդիչ եւ ժխտական բնոյթ: Քեսապցիին մտահոգութիւնը աւելի կը սրէր Թուրքիոյ ժխտական քաղաքականութեան աստիճանական կարծրացումին զուգընթաց:

Քաղաքական կացութենէն անկախ, կային նաեւ 1909ի եւ 1915ի տեղահանութիւններուն պատմական յիշողութիւնն ու փորձառութիւնը, որոնք կը յուշէին, թէ պէտք է զգօն ըլլալ: Այնպէս որ, երբ տակաւին Քեսապ խաղաղ էր, Գարատաշ գիւղէն մինչեւ Տիւզազաճ գիւղ քեսապահայեաց թրքական ամբողջ սահմանագիծը Քեսապի եւ գիւղերու տղամարդոց կողմէ գիշերէն արշալոյս աչալուրջ հսկողութեան տակ առնուեցաւ՝ առանց ցուցական զինեալ երեւոյթներու: Հսկողութիւն կատարող տղամարդոց մեծամասնութիւնը 3-4 տարի պարտադիր զինուորութեան օրէնքով ծառայած էր սուրիական բանակին մէջ, այնպէս որ ունէր անհրաժեշտ եւ բաւականաչափ զինուորական գիտելիք: Ասկէ անկախ, քեսապցի տղամարդը հարազատ զաւակը ըլլալով իր բնական միջավայրին՝ շատ լաւ գիտէ աշխարհագրական բոլոր յարմարութիւնները՝ նման գործի համար:

Սուրիահայ գաղութի ազգային-եկեղեցական կեանքի ղեկավարման կեդրոնը Հալէպն է: Կազմակերպական կառոյցի տեսակէտէն, ինչպէս Սուրիոյ միւս քաղաքները, Քեսապի ալ հայ համայնքները, ազգային կառոյցներն ու միութիւնները կը ղեկավարուին Հալէպէն: Այնպէս որ Քեսապ կը հետեւէր Սուրիոյ տագնապին գծով Հալէպի որդեգրած ուղղութեան, թէեւ երկրի բնակչագրական քարտէսին վրայ կը գտնուէր Հալէպէն տարբեր գօտիի մէջ: Սուրիահայութեան պաշտօնական դիրքորոշումը այս էր. պաշտօնապէս հակադիր ճակատներէն ոչ մէկուն կողմ ըլլալ: Այս քաղաքականութիւնը, որ կը բխէր գաղութի անվտանգութիւնը ապահովելու իրողական կացութեան հրամայականէն,

կը վայելէր Հայաստանի պետութեան եւ համայն հայութեան ամբողջական զօրակցութիւնը:

Սուրիոյ տարածքին, երբ տագնապը սկսաւ թէժանալ՝ Քեսապի մէջ թափ տրուեցաւ յարաբերական աշխատանքներուն:

Քեսապէն ոչ-շատ հեռու կառավարութեան ընդդիմադիր հիմնական տարրը թուրքմէններն էին, որոնք կը սկսէին համարձակ դառնալ՝ անմիջականօրէն Թուրքիոյ քաղաքական եւ քարոզչութեան ազդեցութեան տակ՝ անոր զօրակցութիւնը ունենալով: Քեսապի հանդէպ՝ մինչ այդ իրենց թաքուն նկրտումները, կը սկսէին բացայայտօրէն արտայայտել: Երբ անոնք Ազատ Բանակին, Ժապիհա Նուրային եւ նման այլ ընդդիմադիր զինեալ խմբաւորումներուն միացան ու անոնց հետ սկսան կողք կողքի կռուիլ, Քեսապի ապահովութեան համար հրամայական նկատուեցաւ պետութենէն զինուորական անմիջական աջակցութիւն ապահովել: Քեսապի պաշտօնական այդ խնդրանքին ընդառաջելով՝ պետութիւնը շրջանին մէջ տեղակայեց պետական բանակի փոքր զօրագունդ մը: Ազգային մարմինները քաղաքապետարանի միջոցաւ, իրենց հնարաւորութիւններուն առաւելագոյն չափով օժանդակեցին անոր: Պետական բանակի զօրագունդը կը վայելէր քեսապահայութեան ամբողջական զօրակցութիւնը. անոր թիկունքը վստահելի, ապահով ու ամուր էր:

Մէկ կողմէ բանակին ներկայութիւնը, միւս կողմէ քեսապահայերուն ամէնօրեայ հերթապահութիւնը ժողովուրդին մօտ ապահովութեան զգացումը աւելիով ամրապնդեցին:

Քեսապի մէջ առաջին հրթիռները ինկան 25 Դեկտեմբեր 2011ին, կաթողիկէ համայնքին Ս. Ծննդեան օրը: Քեսապցիները ասիկա նկատեցին ազրանշան մը յատուկ Քեսապի ուղղուած:

Հետզհետէ բացայայտ կը դառնար Քեսապը «անջատ գօտիի» վերածելու Թուրքիոյ պիտրժակը:

2012ի ամառէն աշուն, զինեալ խմբաւորումներու եւ ահաբեկիչներուն թափանցումը կանխարգիլելու համար, իշխանութեան կողմէ շրջանի անտառները հրդեհի տրուեցան: Քեսապցիները հսկեցին իրենց պարտէզներուն, որպէսզի հրոյ ճարակ չդառնան:

25 Յուլիս 2012ին Հալէպի մէջ կազմուեցաւ Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Մարմինը: Տարուան վերջը, ինչպէս Սուրիոյ հայաշատ այլ քաղաքներուն մէջ, Քեսապի մէջ ալ կազմուեցաւ նմանատիպ կազմով անոր Գործադիր Մարմինը, որ մինչեւ 21 Մարտ 2014 օժանդակեց Հալէպէն, Եագուպիայէն եւ Ռաքքայէն Քեսապ ապաստանած հայ ընտանիքներուն: Ի դէպ, այդ շրջաններէն Քեսապ ապաստանած կարիքաւոր ընտանիքները, եկեղեցական-ազգային մարմիններու կարգադրութեամբ տեղաւորուեցան ազգապատկան տուններու մէջ: Անոնցմէ ստուար թիւի մը քեսապցիները ձրիաբար տրամադրեցին իրենց

վարձու բնակարանները: Յուլիս 2013էն, ամսական հերթականութեամբ, շուրջ հարիւր ընտանիքներու սկսաւ պարէն բաժնուիլ: Նիւթական օժանդակութիւն տրուեցաւ Քեսապի հայկական դպրոցներուն:

2012 Յուլիսէն զինեալ ընդդիմադիրներու զինուորական յառաջխաղացքով կացութիւնը աւելի լարուեցաւ: Ժողովուրդի ապահովութիւնը ուղղակի մարտահրաւէր դարձաւ: Հետեւաբար, ճիգերը կեդրոնացուեցան այդ ուղղութեամբ: Օգոստոսի սկիզբը փակուեցաւ Քեսապը Լաթաքիոյ կապող գլխաւոր ճամբան: Զինեալ ընդդիմադիրներու կողմէ կատարուեցան յաճախակի փորձեր՝ կտրելու Լաթաքիա-Պասիթ ճամբան, որ Քեսապը Լաթաքիոյ կապող միակ ճամբան մնացած էր:

Դեռեւս 2012ին, վատ օրերու հաւանականութիւնը կանխատեսելով, օրուան հրատապ խնդիրներու օրակարգով կազմակերպուեցան միջհամայնքային եւ համաքեսապցիական խորհրդակցական հանդիպումներ: Անոնցմէ ոմանց մասնակցելու հրաւիրուեցան Քեսապ բնակող ոչ-հայ տարրի երեւելիներ եւս: Այդ հանդիպումներուն բոլորն ալ համաձայն էին մարտահրաւէրները միասնաբար դիմագրաւելու սկզբունքին, սակայն կային նաեւ որոշ վերապահութիւններ տարուող աշխատանքներուն գծով: Քեսապը մէկ մեծ ընտանիք է, ուր կարելի չէ բաժանարար գիծեր քաշել համայնքային եւ գաղափարական տարբերութիւններու վրայ գրաւ դնելով, թէկուզ եթէ նման բան փափաքողներ իսկ ըլլային: Բոլորին համար գլխաւոր հարցը Քեսապի ժողովուրդին անվտանգութիւնն էր, որ սակարկելի չէր:

Անընդհատ կը շարունակուէր գիշերէն մինչեւ առաւօտ ամէնօրեայ հերթապահութեան դրութիւնը: Տարբեր աղբիւրներէ կը հաւաքուէին հակառակորդներու մասին տեղեկութիւններ: Հսկող տղաները իրենց անթել հեռախօսներու միջոցով «կը լրտեսէին» հակառակորդը ին մտադրութիւններն ու շարժումները: Կը շարունակուէր բանակի զօրագունդին եւ պետական գրասենեակներուն հետ գործակցութիւնը: Ժողովուրդին մօտ խուճապ չկար: Իսկ հաւաքաբար Քեսապը լքելով այլ տեղ կայք հաստատելու մտադրութիւն՝ բնաւ: Նոյնիսկ՝ երբ խաղաղ ցոյցերէն ետք զինեալ բախումները հասան Լաթաքիոյ հիւսիսը՝ Քեսապի մատուցներուն, երբ հրթիռակրծումները յաճախակի դարձան, երբ ստոյգ վտանգի պատճառով մէկէ աւելի անգամ հարկ եղաւ պարպել Տուզաղաճ գիւղի բնակչութիւնը:

Պատահեցան դէպքեր, երբ անակնակալօրէն, անհիմն կերպով կը տարաձայնուէր Թուրքիոյ կողմէ յարձակումի մասին եւ Լաթաքիա կը տեղափոխուէին սակաւաթիւ ընտանիքներ, որոնք հոն սեփական բնակարան եւ կամ մօտիկ ազգական ունէին:

21 Մայիս 2013ին Թուրքիա զոցեց իր սահմանը Սուրիոյ հետ: Փակուեցաւ նաեւ Քեսապի սահմանադուրը: Ընդդիմադիր զինեալները

սկսան յարձակումներ գործել Լաթաքիոյ հիւսիսային շրջաններուն վրայ՝ պետական անցարգելներ թիրախ դարձնելով, համազարկի տակ առնելով եւ ոմբահարելով կառավարական ուժերու հակակշռին տակ գտնուող Քեսապի մօտակայ շրջաններ: Մայիս 29ին թրքական ուղղաթիռ մը ցածէն թռիչք կը կատարէր սահմանագիծի ամբողջ երկայնքով: 23 Յուլիսին, Քեսապ երկրորդ անգամ կը հրթիռակոծուէր: Հինգ հրթիռներ կ'իյնային տարբեր գիւղերու բաց տարածքներուն վրայ:

Հրթիռակոծումի դէպքերը դարձան յաճախակի: Աւելի մտահոգիչը սակայն, Լաթաքիոյ Նահանգի հիւսիսային գօտիին մէջ ընթացող զինուորական իրադարձութիւններն էին: Պատասխանատու մարդիկ, յատկապէս մօտէն կը հետեւէին անոնց զարգացումներուն: Ժողովուրդը վարժուած էր պայթիւններու ձայներուն: Տղամարդիկ հոգեպէս պինդ էին: Անոնք առանց ընկրկումի, կազմ ու պատրաստ, ոտքի ելան, երբ ընդդիմադիր զինեալները թրքական սահմանագիծէն Սեւ Աղբիւրի ուղղութեամբ փորձեցին Քեսապ ներխուժել, սակայն, չթափանցած՝ ետ քաշուեցան:

Երկու հաւանականութիւններ հաշուի մէջ էին, եւ նկատի առնուած. Թուրքիա սահմանը բանալով ահաբեկիչները ներս մղելու հաւանականութիւնը եւ շրջափակման մէջ իյնալու վտանգը:

Ժողովուրդը ինք կը խօսէր այս երկու հաւանական վտանգներուն մասին եւ պատահելու պարագային իր ընելիքներուն դիպաշար կը հիւսէր:

Կը մթերուէին բաւականաչափ պարէն, դեղորայք եւ այլ պարագաներ: Սպառնալից վտանգի պարագային կիներն ու մանուկները ապահով վայր պիտի տեղափոխուէին: Միութիւնները ցանկագրած էին իրենց գոյքերը:

Նպատակայարմար տղամարդիկ ապահովուած էին ինքնապաշտպանական թեթեւ զէնքերով: Բայց աչքառու զինեալ երեւոյթներ չկային: Քեսապցիները սովորական կերպով կը զբաղէին իրենց առօրեայ գործերով: Քեսապ բնակող ալեւի տարրը անջատաբար զինուած էր: Քեսապցիներէն ոմանք զէնք ձեռք բերած էին անձնական միջոցներով:

2011էն դադրեցաւ զբօսաշրջութենէն եկամուտ ապահովելու շատ մը ընտանիքներու միակ ապրուստի միջոցը:

2013ին Քեսապի տնտեսական վիճակը ծանր էր. կարկուտը, աւելի կանուխ՝ գարնան յորդառատ անձրեւները պատճառ դարձած էին, որ պտղատու ծառերը համարեա բերք չտան: Երիտասարդութեան կարեւոր տոկոս մը առժամաբար լքեց շրջանը, մեկնեցաւ Պէյրութ եւ ՀՀ՝ ուսանելու կամ գործ ճարելու մտադրութեամբ:

Հիմնական առաջադրանքը կը մնար վտանգի պարագային ժողովուրդը փրկել՝ նուազագոյն կորուստով: Ամէն պարագայի, Գարատուրան գիւղէն մինչեւ Լեղի Զուր երկարող պետական սահմանագիծ մը պաշտապնելը, Թուրքիոյ զինուորական բացայայտ

մասնակցութեամբ Մարտ 21ի տարողութեամբ յարձակում մը կատարելը կամ ետ մղելը, միայն կանոնաւոր բանակ մը կրնար: Ինչ կը վերաբերի քեսապահայութեան՝ ան իր ունեցած մարդկային կարողութիւններով եւ նիւթական կարելիութիւններով ամուր կանգնած էր օրինաւոր բանակի կողքին եւ գործնապէս զօրավիգ էր անոր:

## 21 ՄԱՐՏ 2014Ի ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ

### **Նախօրեակին**

Ձանց կ'առնեմ զինուորական գործողութիւններու ներկայացումը: Մնալով ուսումնասիրութեան վերնագրի թելադրած շրջագիծին մէջ, սերտելով ձեռքիս տակ եղած անտիպ նիւթեր, հիմնուելով ազգային մարմիններու հաշուետու մարդոց եւ պատասխանատու անձնակազմներու պատումներուն վրայ, հոս կ'արձանագրեմ հետեւեալը.

21 Մարտին նախորդած օրերուն, տարածայնուած է, թէ Քեսապի վրայ յարձակում տեղի պիտի ունենայ թրքական սահմանէն: Նոյն օրերուն ազգային մարմիններու հաշուետու հսկողութիւն կատարող խմբակները հետեւած են Թուրքիոյ սահմանագիծին վրայ մարդկային կուտակումներուն եւ տեղեակ պահած պետական մարմինները:

- Հինգշաբթի, Մարտ 20ի ուշ երեկոյեան, հայկական կողմի պատասխանատուները իրենց ունեցած յարաբերական կապերու միջոցով իմացած են, որ ա՛յդ գիշեր յարձակում տեղի պիտի ունենայ: Հակառակ անոր որ ատկէ առաջ նման լուրեր սուտ ելած են, քեսապահայութեան ապահովութեան հսկող հայ տղոց պատուիրուած է կազմ ու պատրաստ վիճակի մէջ գտնուիլ եւ խստացնել զգօնութիւնն ու աշալուրջ հսկողութիւնը: Մարտ 20ի գիշեր 21ի առաւօտուն, թրքական սահմանագիծին վրայ անոնք նկատած են մարդկային լուրջ կուտակումներ՝ Քեսապի վերեւի սահմանագիծին վրայ յատկապէս:

### **Ուրբաթ, 21 Մարտ**

Ուրբաթ, կանուխ առաւօտուն, Թուրքիոյ հողերէն Քեսապի վրայ հրթիռակոծումի եւ հրասանդերու տարափը իրողապէս ազդանշան մը եղած է, որ կացութիւնը լուրջ է, եւ ինչ որ կը պատահի Քեսապը իր գիւղերով հրթիռակոծելու դէպք չէ միայն, այլ համընդհանուր յարձակումի մը նախասկիզբը: Զօրացնող այլ փաստ մը եղած է Քեսապի վերեւ տեղի ունեցած պատահական փոխհրացանածգութիւնը՝ մէկ կողմէ ժողովրդային պաշտպանութեան հայ տղոց փոքր խմբակի մը եւ պետական գաղտնի սպասարկութեան ու Քեսապի *Մուրիիր ալ Նահիյէի*, միւս կողմէ գրոհայիներու միջեւ: Անոնք նպատակ ունեցած են կտրել Քեսապէն ելքի ճամփաները եւ ժողովուրդը պատանդ պահել:

Հրթիռակոծման եւ հրասանդերու Քեսապի վրայ իյնալու եւ զինուորական առաջին գործողութիւններուն զուգընթաց, քեսապցի պատասխանատուներ անհրաժեշտ նկատած են մանուկներուն ու կիներուն տեղափոխումը: Ամէնէն ուշ, դուրս բերուած են էքիզօլօքցիները, Ուրբաթ յետմիջօրէին:

Հսկող տղաները իրենց դիրքերէն, կապի մէջ եղած են իրենց ընտանիքներուն հետ՝ անոնց պէտք եղած թելադրութիւնները տալով: Քեսապի եւ գիւղերու բնակիչները լուր տուած են այլ գիւղերու իրենց հարազատներուն: Լրատուամիջոցներէն Քեսապի վրայ համընդհանուր յարձակման մասին լսած ըլլալով՝ նոյնիսկ Արաբական Միացեալ Էմիրութենէն, հեռաւոր Քանատայէն հեռաձայնողները իրենց հարազատներուն պատուիրած են առանց ուշանալու դուրս գալ Քեսապէն:

Պատասխանատու քեսապահայեր ընթացող զինուորական իրադարձութիւններուն շուրջ խորհրդակցած են ընելիքներու մասին եւ համախորհուրդ որոշ գործողութիւններ կատարած:

Հսկող տղաները եւ պատասխանատու անձնաւորութիւններ օգնած են բանակայիներուն: Ինչպէս՝ զանոնք լեռնային կածաններէ առաջնորդած, առաջարկներ կատարած, հակառակորդին հաղորդակացութիւնները թարգմանած, տեղէ տեղ բանակայիներ եւ վիրաւորներ փոխադրած են.: Հակակշռի տակ առնուած են հիւսիսէն եւ հիւսիս արեւմուքէն Քեսապ մուտք գործելու արահետները եւ գրոհայիները ետ մղուած են անկէ: Նոյնպէս ձախողուած է Վարի Պաղճաղազ գիւղէն Քեսապ-Լաթաքիա տանող միակ ճամբան կտրելու գրոհայիներու մէկ ծրագիրը<sup>4</sup>

Ուրբաթ, ամբողջ սահմանագիծի երկայնքին՝ Քեսապէն Լեդի Զուր ռազմագիծին վրայ ներխուժման բախումներ արձանագրուած են: Ուրբաթ կէսօրէ առաջ միայն գրաւուած է Քեսապի վերեւ գտնուող սուրիական սահմանակէտը, սակայն կէսօրէ ետք վերգրաւուած է բանակին կողմէ: Գրաւուած է Սեւ Աղբիւրի միայն սահմանակէտը եւ երկու տուն: Բայց ներխուժողները Ուրբաթ օր չեն կրցած Սեւ Աղբիւրի գիծը ճեղքել ու մտնել Քեսապ:

Բանակը բուռն կերպով դիմադրած է: Սակայն Թուրքիոյ հողերէն իր զրահամեքենաներուն ոչնչացումով տկարացած է իր դիմադրական կարողութիւնը:

Քեսապահայ ընտանիքներու շատերու ինքնաշարժ ունենալը մեծապէս արագացուցած է ժողովուրդին դուրս գալը, ինչ որ թեթեւցուցած է հսկող տղոց աշխատանքները՝ անելի հանգիստ սրտով գետնի վրայ հետեւելու զինուորական իրադարձութիւններուն:

Նպատակայարմար տղամարդիկը ուրբաթ գիշեր մնացած են Քեսապ, ամէն մարդ իր շրջանին մէջ՝ Էսկիւրան, Տիւզաղաճ, Էքիզօլօք, Քարատաշ... եւ շարունակած են հետեւիլ զինուորական իրադարձութիւններու ընթացքին:

## **Շաբաթ, 22 Մարտ**

Շաբաթ առտու բաական թիով ընտանիքներ Լաթաքիայէն վերադարձած են իրենց բնակավայրերը. ոմանք կրցած են երթալ իրենց տուները, ոմանք՝ ոչ: Մինչեւ կէսօր եղած է շատ խաղաղ: Կէսօրուան մօտ մէկ անգամէն բռնկած է ամբողջ սահմանագիծը: Գրոհայիները Քեսապ մտած են սահմանադուէն-Լեդի Ջուր երկարող գիծէն. Տուգաղաճէն ճեղքած են սուրիական պաշտպանական գիծը եւ վարէն վեր սկսած են բարձրանալ Էքիզօլուք՝ կտրելու համար ճամփան այդ կողմէն:

Այդ վերջին գիծին վրայ, Էքիզօլուքի կողմը, բանակի քաշուելէն ետք, հսկող տղաներ մնացած են դիրքի վրայ՝ յարձակողներուն դիմաց, մինչեւ որ իրենց հեռաձայնով փոխանցուած է, թէ ժողովուրդը արդէն անցած է վտանգի գօտիէն եւ կրնան քաշուիլ:

Ներխուժումը Թուրքիոյ կողմէն ըլլալով՝ յատկապէս սահմանագօտիին մօտիկ գիւղերու (Սեւ Աղբիւր, Էսկիւրան, Տիգաղաճ) բնակչութիւնը առանց տնտնալու արագօրէն վտանգի գօտիէն դուրս եկած է: Միւս գիւղերու բնակիչները, յատկապէս Էքիզօլուքիները ունեցած են բաւարար ժամանակ իրենց հետ առնելու կարեւոր ամէն բան, մանաւանդ որ սեփական ինքնաշարժներ ունէին: Բայց քանի որ փախուստի նպատակ չեն ունեցած, այլ միայն վտանգի գօտիէն հեռանալու ու աւելի ապահով վայր տեղափոխուելու եւ մանաւանդ որ բոլոր տղամարդիկը կը մնային գիւղ, չեն մտածած գէթ անհրաժեշտ եւ կարեւորագոյն բաներ իրենց հետ առնել:

Եղած են ընտանիքներ, որոնք իրենց ինքնաշարժներով ուղղակի քշած են Լաթաքիա, բայց շատերը նախ մնացած են Էքիզօլուք, ապա Պաղճաղազ, եւ անկէ վար գտնուող ոչ-հայկական գիւղեր:

Հրթիռակոծումէն աւելի վտանգալից եղած են արձակազէնները:

Հակառակ հսկող տղոց պատասխանատուներու բազմիցս խնդրանքներուն, Քեսապէն դուրս, անոր արեւմուտքի մատոյցներուն տեղակայուած թնդանօթները ոչ մէկ արկ արձակած են ներխուժողներուն ուղղութեամբ:

Միայնակեաց ծերերէն շատեր չեն ուզած դուրս գալ իրենց տուներէն, հակառակ եղած պնդումներուն: Իրենց զաւակներուն հետ ապրող ծերերը, իրենց տնեցիներուն գրեթէ բռնի ստիպումով դուրս եկած են տուներէն: Մտածուած է բոլոր ծերերուն մասին: Ոմանք կարելի չէ եղած դուրս բերել զինուորական գործողութիւններու արագ զարգացումին պատճառով:

Հսկող տղոց արթնամտութեան, արագ կողմնորոշումին եւ գործելուն շնորհիւ է որ ժողովուրդը կրցած է դուրս գալ հակառակորդի աքցանին մէջէն: Պահ մը պատկերացնենք, ի՞նչ կրնար պատահիլ, եթէ հսկող տղաները այդ գիշեր իրենց գիւղերուն պահպանութիւն ըրած չըլլային:

Ազգային պատկան մարմիններ տեղեակ պահած են Լաթաքիոյ համապատասխան մարմինները կացութեան մասին եւ անոնց թելադրած,

որ Քեսապի ժողովուրդը ընդունելու եւ անոնց տեղ յատկացնելու պատրաստութիւն տեսնեն:

Քեսապէն վերջին դուրս ելլողները (բացառութեամբ այն քանի մը քեսապցիներուն, որոնք լեռնային ճամփայով հետիոտն հասած են Պաղճաղագ), եղած են հսկող տղաները իրենց կարգ մը պատասխանատուններով, իրենց հետ ունենալով այն ընտանիքները, որոնք Շաբաթ առտու Քեսապ բարձրացած էին իրենց տուները վերադառնալու մտադրութեամբ: Իսկ Կիրակի առտու Քեսապէն եւ Գարատուրանէն քանի մը պարզ գիւղացի մարդիկ - վերջին մնացողները - հետիոտն դուրս եկած են լեռնային կածաններով՝ բռնելով Լաթաքիոյ ճամփան:

Լաթաքիոյ մէջ ալ շարունակուած են յարաբերական նախկին կապերն ու աշխատանքները՝ Քեսապի հարցով: Այնպէս չէ որ տեղահանութեամբ վերջ գտած է Քեսապի հետ կապուած ամէն բան:

Այդ երկու օրերուն Քեսապի հսկող բոլոր տղաները, առանց բացառութեան, ամբողջական զօրաշարժի մէջ եղած են: Անոնց մէջ յուսաբեկ կամ դասալիք մարդ չէ եղած: Անոնք իրենց դիրքերէն հետեւած են զինուորական իրադարձութիւններուն եւ կողմնորոշուած ըստ անոնց զարգացումներուն:

Ազգային պատասխանատուներ կապի մէջ եղած են Հալէպի հետ ու տեղն ու տեղը փոխանցած, թէ ինչ կը կատարուի Քեսապի մէջ եւ ստացած համապատասխան թելադրութիւններ:

Անշուշտ զինուորական փորձագէտ մասնագէտներու գործն է գնահատականը տալ Մարտ 21-22 զինուորական իրադարձութիւններուն: Թէ ի՞նչ պատահեցաւ այդ երկու օրերուն եւ ինչպէ՞ս պատահեցաւ: Կարելի՞ էր, թէ՞ կարելի չէր առկայ զինուորական հնարաւորութիւններով՝ կասեցնել ներխուժումը:

Ամէն պարագայի, այս ուսումնասիրութեան շրջագիծին մէջ մեզ հետաքրքրողը քեսապահայութիւնն է: Ինչ որ ցոյց կու տան 21-22 Մարտի երկու օրերու վերոնշուած ոչ-ամբողջական փաստերը՝ Քեսապը լքելու նպատակ չէ եղած, եւ ոչ ալ դասալքութեամբ փախուստի դիմելու մտադրութիւն: Հետեւաբար, ոչ մէկ ձեռով կարելի է մեղադրել քեսապահայութիւնը եւ կամ անոր իսկական ներկայացուցիչները՝ դասալքութեան մէջ: Նման մօտեցում կրնան ունենալ միամիտ, ռազմագիտական բաւարար գիտելիքներ չունեցող, զինուորական գործերէ զլուխ չհանող, իրերու եւ իրողութիւններու խորքին անտեղեակ, բայց մանաւանդ սուրիահայութեան որդեգրած քաղաքական կեցուածքին անձանօթ եւ կամ այդ կեցուածքը այս կամ այն դրդումով կամ միտումով չհասկնալ ձեւացնող, չընդունող քաղաքական տհաս մտածողութեան տէր մարդիկ միայն:

21 Մարտը աղէտ է՝ Թուրքիոյ պատճառով Քեսապի հայաթափման արդիւնքով: Ան ցնցեց եւ ոտքի հանեց ամբողջ հայաշխարհը: Նոյն ատեն հերոսական դրուագ է յարձակողներու արջանէն ժողովուրդին գրեթէ ամբողջութեամբ անվնաս դուրս գալու իրողութեամբ: (Այս մասին հրապարակաւ, եկեղեցիներու խորաններէն արտայայտուեցան տեղահանուած ժողովուրդին իրենց զօրակցութիւնը յայտնելու համար Լաթաքիա ժամանած եւ ժողովուրդին վերադարձէն ետք Քեսապ այցելած թէ՛ կրօնական առաջնորդներ, թէ՛ ազգայիններ, թէ՛ հայրենի եւ թէ՛ սուրիացի պետական ղէմքեր, որոնք քաջաճանօթ էին Սուրիոյ այլ շրջաններու մէջ անզէն ժողովուրդին վրայ ահաբեկչական նման յարձակումներուն արդիւնքին):

Քեսապցիները հազիւ Լաթաքիա հասած - դեռեւս ցնցումի մէջ եւ արմատախիլ - կը կրկնէին. «Յաղթեցինք: Թուրքին ուզածը չեղաւ»: Զիրար մխիթարելու խօսք չէր ասիկա, այլ թուրքին կողմէ «ջարդուած հայու» պատմական թանձր ու սեւ յիշողութեան հակառակ դրական փաստարկ:

## ՏԵՂԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ. ԱՆԴՐԱԴԱՐՁՆԵՐ

### **Ֆիզիքական երեւոյթներ**

Դէպքը ցնցած էր քեսապցիները (ներսը թէ դուրսը): Ոմանց մօտ երեսան եկան կարգ մը ֆիզիքական երեւոյթներ ինչպէս՝ ժամանակի հասկացութեան շփոթ, կեդրոնացումի դժուարութիւն, մարմնի որոշ մասերու մէջ ցաւ եւ կողմնորոշուելու դժուարութիւն: Ասոնք շուտով անհետացան, բացի՝ ժամանակի հասկացութեան շփոթէն, որ շարունակուեցաւ Քեսապ վերադառնալէն ետք ալ: Լաթաքիոյ մէջ համախումբ կեանքը բարերար ազդեցութիւն ունեցաւ, ցնցումին ազդեցութիւնները յաղթահարելու: Խուճապային վիճակի կամ սուր տագնապի ախտանշաններ չերեւացին անոնց մօտ:

### **Պատմական Յիշողութեան Վերազարթում՝ Զգայարաններու Ճամփով**

Ինչպէս մեր գիտակցութիւնը, այնպէս ալ մեր ջղային համակարգը ունի իր յիշողութիւնը: Անոր մէջ ալ նստած է պատմական յիշողութիւնը: Սահմանամերձ գիւղերու բնակիչներ լսած էին ահաբեկիչներուն «*Ալլահ ու Աքպար*», «*ժայինքոն*» («*Կու գանք ձեզի*»՝ սպառնական ոճ) կանչերը: Լսողական զգայարանը ենթագիտակցականէն գիտակցական աշխարհ բերած եւ արթնցուցած էր Յեղասպանութեան ատեն թուրքին կատարած անխնայ վայրագութիւններուն յիշողութիւնը: Նկատի ունենանք նաեւ որ այդ յիշողութիւնը թարմացած էր Սուրիոյ տարբեր շրջաններու մէջ ահաբեկիչներու կատարած ջարդի ու կոտորածի վայրագութիւններով, որոնք ցոյց կը տրուէին հեռատեսիլի կայաններէն: Քեսապցիները կ'ըսէին. «Արաբներուն այսպէս ընողը, մեզի՛ պիտի չընէ»:

Թուրք վայրագ մարդու պատկերը տակալին վառ է մեր հաւաքական յիշողութեան մէջ: Շարունակելով հայուն հանդէպ իր բարբարոսական արարքները, սպանելով Հրանդ Տինք, Սեակ Պալըզճի, թուրքը ինք չի նպաստեր, որ տժգունի իր այդ ժխտական պատկերը, որ Սուրիոյ ճգնաժամին մէջ վերաթարմացաւ նաեւ արաբ սուրիացիին մէջ, այս պարագային Օսմանեան Կայսրութեան պատմական հասարակաց անցեալէն հեռու, վերանորոգ կերպով եղբայրացնելով սուրիացի արաբն ու սուրիաբնակ հայը, որուն ո՛չ գիտակցականին, ո՛չ ալ ենթագիտակցականին մէջ գոյութիւն ունի արաբ վայրագ մարդու կերպար: Ընդհակառակը, հայը արաբը կը բնորոշէ միայն դրական յատկանիշերով: Մենք կերտած ենք այդպիսի արաբի տիպար՝ մշակութային դրսեւորումներով եւ յարատեւող, ամէն առիթի կրկնուող քարոզչական միջոցներով. երախտագիտութեան արժանի տեսական տուրք մը՝ 1915ին Ադէտին դէմ ընդհանրապէս արաբներուն եւ յատկապէս սուրիացի արաբին կողմէ հայութեան մնացորդներուն հանդէպ ցուցաբերած ընդհանրական համակրանքը վաւերացնելով:

Քեսապի մէջ ունէինք երկու սեռէն ալ ծերունազարդ մարդիկ, որոնք տասնամեակներով դուրս չէին եկած Քեսապէն, նոյնիսկ մինչեւ Լաթաքիա գացած չէին: Մարտ 21ին ընդհանրապէս դժուար եղած էր ծերունիները համոզելը՝ զանոնք բերելու տուներէն. «Դուք գացէ՛ք, մենք հոս կը մնանք», «Արաբները մեզմէ ի՞նչ կ'ուզեն, կու գան՝ թող գան» ըսած էին անոնք, երբ իրենց զաւակները կամ հարազատները զանոնք իրենց հետ Լաթաքիա տանելու մասին ըսած էին անոնց: Գրեթէ «բռնի ձեռով» կարելի եղած էր զանոնք դուրս բերել: Բազմաթիւ են այդ մասին փաստերը:

Մարտ 21ին քեսապցիին մէջ կը վերաթարմանար թուրքին վայրագ կերպար մը ըլլալու հաւաքական յիշողութիւնը լսողական ու տեսողական զգայարաններու հաղորդած տեղեկութիւններուն միատրումով: Ինչ որ Յեղասպանութեան պատմութեան ճամփով իրեն հասած էր, իրական կեանքի մէջ հեռատեսիլէն ակնատեսը կ'ըլլար անոնց կրկնօրինակ մանրատիպ դէպքերուն: Փոխանցուած եւ իրական կեանքէ եկած պատկերներու զուգորդումին ակնարկելով Սեւ Աղբիւր գիւղէն միջին տարիքի կին մը կ'ըսէր. «Կ'ոռնային ճիշտ այնպէս, ինչպէս լսած էի պարկերասփիտէն. գիպցայ որ եկողները թուրքեր են: Դեռ ականջիս մէջն են անոնց ոռնոցները: Բայց այս անգամ իրենց ուզածը չեղաւ»:

### ***Առանց Տուն ու Տանիքի Հաւաքական Ընտանիք***

Եկեղեցւոյ շրջափակին մէջ ստեղծուած էր «Հոգեւոր Քեսապը»: Անկէ դուրս ապաստանածներուն թիւը աւելի մեծ էր, քան ներս բնակողները: Դրսեցիները կենցաղային ինչ պայմաններու մէջ ալ ըլլային, ներսիններէն աւելի լաւ էին, գէթ կ'ապրէին մէկ տանիքի տակ ընտանեօք, կամ հարազատներու հետ: Սակայն եւ այնպէս եկեղեցւոյ շրջափակը,

քեսապահայութեան պաշտօնական նստավայրն ու հաւաքական կեանքի կեդրոնն ըլլալով, ձգողական ուժի պէս իրեն կը քաշէր տուն ու տանիք կորսնցուցած քեսապցիները:

Կային ոմանք, մեծահասակներ, որոնք Լաթաքիոյ իրենց հանգստաւէտ տուները ձգած՝ եկեղեցւոյ շրջափակի չոր աթոռներուն վրայ ամբողջ օրը կ'անցընէին առանց տրտնջալու: Ոմանք նոյնիսկ կը գիշերէին հասարակաց սրահին մէջ: Երբ այդ մասին իրենց խօսք կ'ըլլար կը պատասխանէին. «Երբ Հոս կու գանք կը թեթեւանանք». «Ամէն ինչ կորսնցուցինք, այսպէս գոնէ զիրար չկորսնցնենք»:

Իգական եւ արական սեռերուն յատկացուած էին առանձին կացարաններ. ընտանիքներու ակամայ բաժնուածութիւն. այս երեւոյթին ակնարկելով՝ «Առանց տանիքի ի՞նչ ընտանիք», կ'ըսէին ծերերը ու կ'աւելցնէին. «Աստուած մեր գլխուն վերեւ անպակաս ընէ ազգին տանիքը (կրկնակի իմաստով. տուն եւ հովանի)»:

Համրանքով միշտ փոքրաթիւ եղած է քեսապցին, բայց բնիկ գերակշիռ տարր եղած է Քեսապի: Ազգակցական խճճուած կապերով ազուցուած՝ ապրումակցումի զգայնութիւնը շատ զօրաւոր է իր մէջ: Իր մօտ ամէն բան հաւաքական է եւ ոչ թէ անհատական: Ան կ'ուրախանայ, կը տխրի, կը մտածէ ու կը գործէ հաւաքաբար՝ իբրեւ մէկ ընտանիք: Ահա թէ ինչու Լաթաքիոյ մէջ փոյլ չեկան անտանիք ընտանիքները եւ բոլորը շարունակեցին ապրիլ իբրեւ մէկ մեծ ընտանիք՝ ազգի հովանիին տակ:

Աղէտահար վիճակի եւ կեցութեան տարականոն պայմաններուն մէջ, կազմակերպուած հաւաքական կեանքը էական երաշխիք է ընկերութիւնը առողջ պահելու համար:

### **Ժողովրդային Իմաստութիւն. Ներդաշնակ Ընկերութիւն**

Իբրեւ տեղահանուած հաւաքականութիւն մը դիտարկած անձ փորձաբար կրնամ ըսել որ, ժողովրդային իմաստութիւնը անելի անելի աշխուժ կը գործէ տագնապալի կացութիւններու մէջ: Տեղահանութենէն առաջ Քեսապի մէջ կային մատի վրայ համրուող մարդիկ, որոնք գետնի վրայ Սուրիոյ տագնապին խնդրով գաղութի որդեգրած պաշտօնական ուղղութեան չէին հետեւեր, ոչ այնքան սկզբունքային հակադրութեամբ, որքան՝ իրենց անձնական շահերու բերումով:

Քեսապը կազմակերպուած հաւաքական կեանքի խոր արմատներ ու տոկուն ասանդութիւններ ունի: Ընկերութեան փոքրաթիւ ըլլալը, անդամներուն ազգակցական կապերով կապուած ըլլալը դրական տուեալներ եղած են, որ մէջտեղ չգան այնպիսի մարդիկ, որոնք իրենց կեցուածքով կամ գործնութեամբ խանգարեն կամ խաթարեն ընկերութեան ներդաշնակութիւնը, պղտորեն ազգային կեանքը: Ընկերութիւնը ինք այդպիսները չէ ընդունած: Եւ եթէ եղած են հատուկէստ այդպիսի մարդիկ, կարելի եղած է զանոնք հակակշռի տակ առնել՝ յօգուտ

Քեսապի հաւաքական շահերուն: Իբրեւ տեղահանուած ընկերութիւն՝ քեսապցիները պահեցին իրենց կազմակերպուած կեանքի ասանդութիւնները անելի բժախնդրօրէն:

Ժողովուրդը, որ կորսնցուցած էր ամէն բան, ներքին պատասխանատուներ չփնտռեց իր մէջ: (Գիտէր որ իր տեղահանութեան պատասխանատուն Թուրքիան էր): Նոյնիսկ երես դարծուց անոնցմէ, որոնք փորձեցին նման բան կատարել: Ինքնըստինքեան զատորոշեց եւ իրմէ վանեց խօսքի եւ գործի կեղծ հերոսները, նախանձախնդիր եղաւ իր արժէքային համակարգը անխաթար պահելու:

Քեսապ վերադարձին, մինչեւ հիմա ալ յաճախ կը լսուի. «*Կ'ուզենք այնպէ՛ս ապրիլ, ինչպէ՛ս Լաթաքիոյ մէջ*»: Եւ երբ կը հարցուի. «*Այսինքն, ինչպէ՛ս*» պատասխանը կ'ըլլայ՝ «*սիրով եւ միաբան*»: Լաթաքիոյ մէջ բազմաթիւ պետական, եկեղեցական, բարեսիրական կազմակերպութիւններու ոչ-հայ պատասխանատուներ, տեսնելով քեսապցիներուն միակամութիւնն ու կազմակերպուածութիւնը, հիացումով ու դրուատիքով կ'արտայայտուէին այդ մասին:

Տեղահանուած կացութեան մէջ Եսի նոյնացումը հաւաքականին հետ զօրացաւ, մարդոց անհատական ժխտական գիծերը զգալապէս տկարացան եւ դրական յատկանիշերը ցցուն ու ծայրայեղ կերպով դրսեւորուեցան:

Ինչ որ Քեսապին եւ քեսապցիին կը վերաբերէր դարձաւ նուիրական:

## ԱՂԷՏԻՆ ՅԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԻՄԱՅԱԿԱՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄՆԵՐԷՆ

Ինձի համար հարց էր, թէ քեսապցին (անհատապէս եւ հաւաքաբար) ինչպէ՛ս պիտի յաղթահարէ իր ապրած ցնցումը. պիտի կարենա՞յ յաղթահարել, թե՛ պիտի խորտակուի: Շուրջըլորս հարազատներս էին, հայրենակիցներս. ես մտահոգ էի իւրաքանչիւրին համար, ամէ՛նուն համար: Զարմանալիօրէն առաջին օրերէն իսկ, ժողովուրդին մէջ բնազդաբար սկսաւ իյայտ գալ ու գործել վերականգնումի հաւաքական ուժականութիւն մը: Ճիշտ այնպէս, ինչպէս մեր մարմնի դիմադրողական համակարգը կ'աշխուժանայ անկախ մեր կամքէն, գիտակցութենէն եւ կ'աշխատի անթափանցիկ կերպով հիւանդութեան կամ մեր մարմինին վրայ որեւէ տեղ վէրք ունենալու ատեն:

Յուսահատ, ընկճուած մարդիկ չէին շուրջիններս, այլ իրենց վերադարձին հաւատացող, անհամբերութիւն ցուցաբերող եւ ամէնէն անելի անորոշութիւնը մերժող ժողովուրդ: Փորձառու ծերունիներ կ'ըսէին. «*Վերադարձի օրը կայ, բայց ե՛րբ պիտի գայ*»: «*Դժուար օրերու կեանքը կարճ կ'ըլլայ*» կը լսէի: Այս ասացուածքը գիտէի, որ ստեղծուած էր Քեսապ, Եղեռնէն վերադարձէն ետք, Ամերիկայէն Հայկական Լեգէոնին միացած քեսապցի կամաւորներուն կողմէ, Քեսապի վերականգնումի դժուարին օրերուն: Երեք ամիսներու ընթացքին, ժողովուրդին կողմէ

պատուիրակություններուն, պատասխանատու անձնատրուութանց, պետական պաշտօնատարներու, հոգեւոր առաջնորդներու եւ ազգային ղեկավարներու ուղղուած միակ հարցումը սա էր. «*Ե՛րբ պիտի վերադառնանք*»: Այդ «*ե՛րբ*»ին պատասխանը ո՛չ ոք ունէր: «*Ուրեմն ինչու կու գան հոս, երբ չեն գիտեր այսքան պարզ հարցումի մը պատասխանը*» կ'ըսէին ոմանք:

Իրենք կը պնդէին. «*Պիտի վերադառնաք. անպայման*»: Պայմանները սակայն կը թելադրէին համբերել, դիմանալ մինչեւ վերադարձի օրը: Այդ պայմաններուն մէջ, ահաւասիկ, ժողովուրդին մէջ գործեց հաւաքական դիմադրողականութեան ներքին ուժական գործիքակազմ (մեքանիզմ) մը:

### **Իրենց Պատմական Փորձառութեան Արտածումը**

Եկեղեցւոյ շրջափակէն ներս ապաստանած շատ համեստ ընտանիքներ առիթ ունեցան սուրիացի այլ տեղահանուածներու հետ փորձառութիւն փոխանակելու՝ միասնաբար մասնակցելով սեմինար-դասընթացքի մը՝ Լաթաքիոյ Նահանգի ամառանոցներէն մէկուն մէջ: Անկէ վերադարձին իրենց փորձառութեան մասին յաճախակի կը պատմէին: Տարբեր առիթներով եւ տարբեր բերաններէ պատումներ լսելու ատեն, անդրադարձայ, որ հասարակաց գիծ մը կարմիր թելի նման կ'անցնի բոլոր պատումներուն մէջէն: Բոլոր պատմողներն ալ կը նշէին, թէ իրենց արաբ բախտակիցներուն պատմած են Հայոց Յեղասպանութեան մասին՝ զանոնք սրտապնդելու համար: «*Մեր տեսածը (Խօսքը 2014 տեղահանութեան մասին է - Շ.Ա.) եւ վիճակը բան մըն ալ չէ անոնց տեսածին եւ ասպրածին նայելով*»: «**Անոնց սիրտ տուինք՝ մեր Յեղասպանութեան մասին պատմելով**»: Իբրեւ սրտապնդիչ օրինակ, Յեղասպանութեան Յաւը չէին պատմած, այլ՝ թէ ինչպէս հակառակ Յեղասպանութեան ենթարկուած ըլլալուն, վերապրած ու վերականգնած ենք:

Կը մտորիմ: Համեստ քեսապցի մարդոց ուրկէ՞ նման դիտանկիւն, երբ մանաւանդ կը գտնուէին տեղահանուած մարդու կացութեան ու հոգեբանութեան մէջ: Եթէ իրենց նախորդները հողին վերադարձած չըլլային՝ պիտի կարենա՞յին այդպէս մտածել, երբ դարձած էին նոր տեղահանութեան մը յիշողութեան կրողները:

Միայն ժամանակի՞ գործօնով պայմանաւորուած է 1915ի Աղէտին յաղթահարումը: Գրաւոր թէ բանաւոր քարոզչական խօսքերուն մէջ մինչեւ հիմա ալ կը շեշտուի ա՛յդ գործօնը. «*Յիսուն տարի պէտք եղաւ, որ յաղթահարենք Յեղասպանութեան Յաւը*»: Նմանամիտ շարադասութեամբ անհաշիւ խօսքերու կը հանդիպինք մամուլին մէջ: Ժամանակէն բացի ուրիշ գործօններ (ենթակայական ու առարկայական) չե՞ն եղած, որոնցմով կամ որոնց միջոցով յաղթահարած ըլլանք Աղէտի Խոցը: Կա՞յ, մշակուա՞ծ է, թէ՛ յատուկ եւ ընդհանրական ի՞նչ գործիքակազմ կը գործէ մարդկային

մեծ աղետները յաղթահարելու ատեն: Գէթ ինձի ծանօթ չէ անյնպիսի գիտական հանրագումար ուսումնասիրութիւն, ուր իմի բերուած ըլլան Յեղասպանութեան Խոցին յաղթահարման գործօններն ու Վերապրումի ու վերականգնումի մեր փորձառութիւնը: Պէտք է պեղել անոնց օրինակելի դրականութիւնը, տեսականացնել եւ զայն միայն մեզի չվերապահելով, ուրիշներուն իբրեւ օգտակար օրինակ ծառայեցնել:

### **Եղեռնի Փոխանցուած Փորձառութեան Համեմատութիւնն Ու Զուգորդումը Անձնական Փորձառութեան**

Իրաքանչիւր չափահաս քեսապցի գիտէր, որ իր վիճակին պատասխանատուն Թուրքիան էր, երբ տակաւին, տեղական, հայկական եւ միջազգային քարոզչամեքենան այդ գործօնին վրայ չէր կեդրոնացած:

Լրատումի ջոցներուն հետ անոնք այդ մասին կ'արտայայտուէին համարձակօրէն՝ միշտ զուգահեռ անցընելով 1915ին հետ: Քեսապի նախորդ տեղահանութիւններու յիշողութիւնը վերաթարմացու հայկական Յեղասպանութեան հաւաքական յիշողութեան հետ տիրաբար միաձուլուած: Նմանատիպ անձնական-հաւաքական նոր փորձառութիւնը համեմատութեան դրուեցաւ նախորդներուն հետ՝ բացայայտ դրական մտածելակերպով, վեր հանելով մտախոհական փոխներագլեցութիւններ անոնց միջեւ:

Անոնք սկսան կեանքի կոչել իրենց նախնիներուն 1915ի փորձառութիւնները՝ դատողական խօսքի միջոցով եւ դրական մտածելակերպով: Կը յիշեմ, Եղեռնէն վերապրողներուն պատումը իրենց փորձառութեան մասին պատմողական-նկարագրական խօսքով էր, յուզականութեամբ յագեցած եւ մանրամասնութիւններով խճողուած:

Ընտանեկան պատմութիւնները, որոնք խամրած էին, սկսան վերյիշուիլ ու պատմուիլ բաղդատական ձեւով: Եղեռնը կը դիտարկուէր, կը պեղուէր Մարտ 21ի դէպքին լոյսին տակ՝ հետեւեալ տրամաբանութեամբ. «Իմ նախորդներս, որ յաղթահարած են Եղեռնը, որ բացի տեղահանուած վիճակէն ուրիշ ոչ մէկ մանրամասնութեամբ կը նմանէր վիճակիս: Ես ուրեմն շար աւելի դիրութեամբ պէտք է կարենամ յաղթահարել այս Աղէտը»:

Ջղային համակարգով ընկալուած Աղէտին յաղթահարումը ուրեմն կը սկսէր մտածողութենէն: Հետեւելով անոնց պատումներու ներքին տրամաբանութեան՝ կ'եզրակացնէի որ եթէ աղէտահարը նախապէս ենթարկուած է նմանատիպ այլ աղէտի, կամ այս կամ այն ձեւով կրողն է անոր, կայ մտային գործունէութեան ընթացք մը, որ կը ներկայանար հետեւեալ պատկերով.-

- Կորուստը՝ (մեծ կամ փոքր) կորուստ է, բայց երբ նախապէս մեծ կորուստներ ունեցած ենք, փոքրերը աւելի դիրութեամբ կը յաղթահարենք:

Նոր կորուստները իրենց կոտտացող թարմութեամբ վերափոխուած ձեռով կը վերաթարմացնեն հին կորուստներու յիշողութիւնը, բայց նաեւ ներուժ կը հայթայթեն նոր կորուստի յաղթահարման եւ հին կորուստներու առաւել սպիացման:

- Ազգովին անցած ենք 1915 գեհէնէն եւ վերապրած անկէ ու վերականգնած, այլեւ ոչ մէկ աղէտ մեզ կը տապալէ:

Նման մտածողական ուժականութիւն շատ կարեւոր գործօն է ազգային նոր մարտահրաւէրներ դիմակայելու պարագային:

Այսպիսով, Յեղասպանութեան (անցեալի իրադարձութեան) պատմական-հաւաքական յիշողութիւնը, դիտուելով դրական տեսանկիւնէ նոր փորձառութեան ընդմէջէն, կը վերածուէր նոր Խոցին սպեղանի-միջոցի: Իսկապէս ալ, Յեղասպանութեան յիշողութիւնը՝ յիսուն տարի ենթակայական եւ առարկայական պայմաններու փոխներգործութեամբ պայմանաւորուած իբրեւ կոտտացող **Տաւ** կրելէ ետք, սկսաւ առաջնորդող գործօնի վերածուիլ, երբ յիշողութեան մասին մեր մտածողութիւնը բարեփոխուեցաւ: Յեղասպանութեան յիշողութիւնը, որ մեր ցաւոտ անցեալէն կու գայ, ներկայիս մեզ կը տանի ապագային՝ ցանկալի ազգային նպատակի ուղղութեամբ՝ հայրենացումին: Որովհետեւ այդ յիշողութիւնը մեր լինելիութենէն անբաժան է:

### **Եսի Անձկալի Վիճակի Ընդլայնում-Թեթեացում. Այլասիրութիւնը՝ Միջոց**

2014 Յունիսի սկիզբը Նոր Գիւղը եւ Հալէպի հայահոծ շրջանները ահաւոր ոմբակոծումի թիրախ դարձան: Այդ օրերուն պատասպարեալ քեսապցիներուն կողմնացոյցը դարձաւ դէպի Հալէպ, գրեթէ մոռցան իրենց վիճակը: Այդ շրջադարձը ակնյայտ դարձաւ շրջափակին մէջ, կտրուկ ձեռով խօսակցութիւններու հիմնական նիւթը Քեսապի փոխարէն դարձաւ Հալէպը: «Եթէ Քեսապ ըլլայինք, գոնէ հոն կու գային, հիմա տեղ ալ չունին երթալու»։ «Ի՞նչ նոր լուր կայ»։ «Աստուած խնայէ»։ «Միայն զոհեր չիյնան»։ «Մեր վրայ կէս օր ռումբ թափեցին անտանելի էր, իրենք ինչպէ՞ս կը դիմանան»։ «Նորէն թուրքն է ընողը, արաբը այդպէս բան չ'ըներ», «տեսա՞ք թէ մեր տեսածը բան մըն ալ չէ. լայն լայն կ'ուրենք-կը խմենք, ապահով ենք, գրպանիս ալ պարսպ չէ»։ Այսպէս, մտածումներու սլաքը ուղղուեցաւ անելի վատ կացութեան մէջ յայտնուած հայրենակիցին կողմը:

Տեղահանութեամբ իւրաքանչիւր անհատական ԵՍ այս կամ այն չափով անձկալի վիճակ կը պարզէր: Սակայն անձկութիւնը շեշտակի կեդրոնածիգ ուղղութիւն չունէր, այլ՝ որոշակի կերպով հորիզոնական. «Ի՞նչ պիտի ըլլանք»: Բնական երեւոյթ. Յաւը կը միացնէ, հասարակաց Յաւը՝ ա՛լ անելի: Քեսապցիներուն իրարու հանդէպ ցուցաբերած այլասիրութիւնը անմիջական, շօշափելի ու առարկայական էր, իսկ

Հալէպի նկատմամբ՝ մտային, որ կու գար հորիզոնական այլասիրութեան պարագիծը աւելիով ընդարձակելու: Քեսապի ազատագրման լուրը քեսապահայութեան հաղորդելու ընդհանուր ցնծութեան մէջ, պատասխանատուի մը բերնէն կը լսէի. «Հալէպի հայերը գոնէ հիմա տեղ մը կ'ունենան գալու»: (Քեսապ վերադառնալէն ետք, իսկապէս ալ, այդ մասին մտածուեցաւ եւ գործնական քայլեր առնուեցան):

Զօրաւոր Ցափ մը վրայ որքան ներհայեաց ըլլայ մեր մօտեցումը, այնքան աւելի դժուար կ'ըլլայ անոր սպիացումը: Եւ ընդհակառակը, երբ մարդկայնօրէն կը դիտենք, կը զգանք, ԵՍականէ անդին անցնող այլուրութեամբ մը «կը վերապրինք» ուրիշին - հարազատ, բարեկամ, հայրենակից, մարդ - ցաւը, մա'նաւանդ երբ մերինէն աւելի ծանր է, մերը, եթէ նոյնիսկ չենք մոռնար, կը զգանք որ կը թեթեւնայ:

### **Հայկական Գործօնը՝ Ինքնավստահութեան Զօրացուցիչ**

Մեծահասակները «Save Kesab»ի մանրամասնութիւններէն անտեղեակ էին. անոնք աւելի 1939ի նախադէպի պատմութիւնը կ'ընէին: Կը մտածէին այսպէս. «Եթէ հայերը, երբ հիմակուան փորձառութիւնը չունէին, վճռորոշ դեր ունեցած են Քեսապը Սուրիոյ սահմաններուն մէջ պահելու, հիմա ալ կրնան բան մը ընել, մեզ ետ վերադարձնելու համար»: «Save Kesab»ի ահագնացող թափէն իրենք իսկ կը զարմանային. «Մենք այսքան բան կ'արժենք միթէ», «Մեզի համար չէ այս բոլորը: Քեսապի՝ համար է», «Հայութեան համար մենք կեցեր-չկեցեր ենք, ի՛նչ կ'արժենք»: Մարդկային իրենց կշիռն ու արժէքը, իրենք իսկ նուազ կը գնահատէին Հողէն: Բայց իրենց հնարած այն վարկածով, թէ՛ 1939ը եւ «Save Kesab»ը հողի համար է, գոհունակութիւն կը զգային. «Իրենց» Քեսապը բոլոր հայերուն Քեսապն է: Բոլորին մտահոգութեան առարկան է: Իրենք առանձին չեն: Եւ երբ հայերը միասին են՝ ուրեմն «Լաւ բան մը կ'ըլլայ»: Հայկական (սեփական) գործօնին հանդէպ վստահութիւնը զօրացուց քեսապցիին ինքնավստահութիւնն ու տոկալու կարողականութիւնը:

### **Նոր Եզրերու Ստեղծում-Տարածում**

Տեղահանութեան երեք ամիսներու ընթացքին, ոչ-մտածուած կերպով, ժողովուրդին հետ ուղղակի շփման ժամանակ, անոր բազմապիսի հարցադրումներուն խտացուած ու բովանդակալից պատասխան իբրեւ եւ անոր մտատանջութիւնները մեղմացնելու, անոր կեցութեան պայմանները տեսականօրէն թեթեւցնելու եւ անոր մէջ վերադարձի յոյսը վառ պահելու թելադրականութեամբ՝ պատահականօրէն մէջտեղ եկան երկու եզրեր՝ **«Երջանիկ Գաղթականութիւն»** (երրորդ տեղահանութիւնը բաղդատութեան դրուելով առաջին երկու տեղահանութիւններուն հետեւած կացութեան) եւ **«Քեսապցիական Բանակում»**:

Բանակում հասկացութիւնը շատ հարագատ է քեսապցիին: Մինչեւ Սուրիոյ տագնապին սկսիլը Քեսապը ո՛չ միայն Սուրիոյ գեղեցիկ ամառանոցներէն մէկն էր, այլ նաեւ Սուրիոյ (եւ Լիբանանի) հայ (նաեւ արաբ) համայնքներու եւ ազգային միութիւններու բանակումի նախասիրած վայրերէն մէկը: Քեսապցիները ամէն ամռան կը սպասէին բանակողները, որոնք յատուկ շէնութիւն կու տային աւանին:

Բանիմաց անձերու մտածումէն եւ բերնէն դուրս եկած այս երկու եզրերը դեղատոմսի նշանակութեամբ, կարգախօսային իմաստ ստացան շուտով եւ լայնօրէն տարածուեցան, մաս կազմեցին քարոզչական բառապաշարին: Դեռ կը շարունակուի անոնց գործածութիւնը, երբ անդրադարձ կը կատարուի տեղահանութեան օրերուն:

### **Բնութեան Օրինակը՝ Դարմանումի Միջոցներէն**

Քեսապցի բնութեան մարդ ըլլալով՝ կատարեալ գիտակցութիւնը ունէր իր վիճակին: Իր կացութիւնը կը նմանցնէր արմատախիլ բոյս մը այլ տեղ տնկելու եւ զայն յատուկ խնամքով վերականգնելու պատկերին: Պատկերաւոր նման գիտակցական մօտեցումը օգնեց հոգեբանական գետնի վրայ քեսապցիին ինքնավերականգման:

### **Զուարճախօսութիւնը, Սրամտութիւնը, Պարսալը՝ Բալասան<sup>5</sup>**

Գրեթէ համոզուած եմ, որ ասոնք կը ծնին հաւաքական կեանքի պայմաններուն մէջ:

Քեսապցի մարդը հիմըր կ'ընէ նոյնիսկ թաղման ատեն, երբ մահացողը ծերունի է: Բազմաթիւ այդպիսի առիթներով լսած եմ անոնց պարզ բառերով փիլիսոփայելը՝ կեանքի ու մահուան մասին: Ան բնութեան զաւակ ըլլալով՝ իրապաշտ կենսասէր է: («Նորէն ո՛վ մոռցած է շունչ առնելու» կ'ըսէ, երբ մեռելի զանգ կը լսէ. հիւանդի մը այցելութեան՝ «Զմոռնաս շունչ առնելու». մէկը շատ նեղուած է՝ «Լա՛ւ շունչ առ», իսկ երբ մէկը պիտի թաղէ՝ «պիտի տնկենք» կ'ըսէ՝ հողին մէջ դնելը, թաղելու զաղափարին հետ չի զուգորդեր, այլ տնկելու):

Գոյութեանական հարցեր չեն դրուիր, երբ լինելիութիւնը խնդիր է: 1915 զաղթականութիւն տեսած մամիկ-պապիկները իրենց պատումի ընթացքին հիմըր կ'ընէին, բայց հազուադէպօրէն, եւ ատիկա - կը խորհիմ - Քեսապ վերադառնալէն տասնամեակներ ետք մաս կազմած է իրենց պատումին: Քանի որ իր մարդկային թուաքանակին երեք-չորրորդը զոհ տուած, ցիրուցան եղած քեսապցիին ինչպիսի՞ սիրտ պիտի ունենար հիմըր ընելու:

Լաթաքիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ շրջափակին մէջ պատմութիւններ հիւսողը կիներն էին, իսկ տղամարդիկ՝ հիմըր ու պարսաւ ընողները: Քեսապցի տղամարդը բնութեամբ ջղայնոտ է, զգացականօրէն չափազանց զուսպ, Միերի Դռան նման փակ. ան բնա՛ւ չի

խօսիր իր զգացական ներաշխարհին եւ զինք փոթորկող ալեբախումներու մասին: Էութեամբ բարի, արտայայտութիւնները՝ կոշտ, երբեմն նոյնիսկ վիրատորիչ, երբ խօսակիցը տղամարդ է. լեռներու վրայ եւ իր պարտէզներուն մէջ՝ թագաւոր, տան մէջ իշխան ու ծառայ, քեսապցի տղամարդը ունի հիմըրի զգացողութիւն: Իր սրամտութիւնն ալ կարծր է, պատկերաւոր ու խայթող, ինքնապարսաւի շեշտադրումով, բնութեան տարրերու եւ պատկերներու օգտագործումով:

Ա՛ն էր, որ տեսած էր ներխուժող գրոհայիններու այլանդակ տեսքն ու կոիւր, ա՛ն էր որ մնացած էր անոնց կրակոցներուն տակ, ապրած էր ընկեր կորսնցնելու անդոհանքը, հրթիռակոծումի տարափին տակ ընտանիք տեղափոխած, ա՛ն էր, որ զինեալ գործողութիւններու թոհուրոհին մէջ պարտաւորուած էր սառն կշռադատել ու ընտանիքին, գիւղին եւ ժողովուրդին փրկութեան մասին մտածել: Քեսապէն դուրս եկած էր՝ արժանապատուութեամբ, բաց ճակատով՝ որ ժողովուրդը փրկուած է, ընդվզումով՝ հազար բանի հանդէպ, որ իրմէ կախեալ չէր եղած, հայիդելով՝ հազար անգամ բոլոր անոնց, որ Քեսապի գլխուն այդ աղէտը պատրաստեցին ու գործադրեցին, գայրանալով՝ ճակատագրին դէմ: Եթէ լռէր՝ կը պայթէր, եթէ խօսէր՝ կը հեղեղէր: Ո՛չ մէկը, ո՛չ միւսը, այլ հիմըրն ու ինքնապարսաւը եղան բալասանը ներաշխարհի կուտակումները պարպելու:

### **Հայաստանը՝ Ապաւէն**

Քեսապցիներուն աչքը երեք ամիս անդադար յառած մնաց Քեսապին, բայց միաժամանակ ամէնուն մտածողութեան մէջ Հայաստանը ներկայ էր: Քեսապ չվերադառնալու պարագային՝ կա՛ր Հայաստանը՝ իբրեւ փրկութեան լաստ, գոյութեան ու ինքնութեան խարիսխ, եւ իբրեւ վերջնական հանգրուան: Այս մտածումը քեսապցիին մօտ բացառեց գոյութենական հաւաքական անդոհանքը (Քեսապ չվերադառնալու պարագային՝ *«ի՞նչ պիտի ըլլանք»*) եւ Քեսապ վերադառնալէ ետք վերականգնման խթան մը հանդիսացաւ: *«Ես ոչ անպուն եմ, ոչ էլ փարագիր»* յաճախակի լսուած երգերէն մէկն էր, միջին տարիքի սերունդի բերնէն:

ՏՈՒՆԴԱՐՁ. ՀՈՂԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

### **Հողը՝ Խարիսխ**

*«Ամէն հայ՝ Հայաստանէն է»* այս մէկը գիտէ քեսապցին, բայց իր պատմական յիշողութիւնը զինք կապուած կը պահէ իր ապրած բնակավայրին՝ Քեսապին հետ: Քեսապը հայրենիքի իմաստ կը զգենու ՀՈՂ ունենալով:

Քեսապցին մեր պատմութեան չէ տուած հերոսամարտ, որմով հպարտանայ: Բայց իբրեւ հաւաքականութիւն կ'առանձնանայ անով, որ